

**ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԲԱՆԱՁԵՎ**

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{n \cdot D_n}}$$

*I* – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

*A* – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

*n* – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

*N* – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

*K<sub>n</sub>* – վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի գումարը:

*D<sub>n</sub>* – վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

**ՓԱՍՏԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

1. Դիցուք հաճախորդին տրամադրվում է **25,000,000** ՀՀ դրամ գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, **240** ամիս մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

**Հաճախորդի ծախսերն են՝**

- Հայտի քննարկման վճար՝ 1,000 ՀՀ դրամ
- գրավի գնահատման վճար՝ 15,000 ՀՀ դրամ
- գրավադրման վճար՝ 94,000 ՀՀ դրամ
- Ապահովագրավճար՝ 37,500 ՀՀ դրամ
- Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 100,000 ՀՀ դրամ

**Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 10.6% :**

2. Դիցուք հաճախորդին տրամադրվում է **2,000,000** ՀՀ դրամ գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, **60** ամիս մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

**Հաճախորդի ծախսերն են՝**

- Հայտի քննարկման վճար՝ 1,000 ՀՀ դրամ
- գրավի գնահատման վճար՝ 15,000 ՀՀ դրամ
- գրավադրման վճար՝ 94,000 ՀՀ դրամ
- Ապահովագրավճար՝ 3,000 ՀՀ դրամ
- Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 40,000 ՀՀ դրամ

**Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 14.4% :**